


# ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ



## ԱՎԵՏԻՔ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի «Գլաժոր» համալսարանի հայցորդ

### ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Սույն հոդվածում վերլուծության են ենթարկվել տնտեսավարման հայրենական և արտասահմանյան փոքր և միջին ձեռնարկատիրության կազմակերպման առանձնահատկությունները: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներառում է տնտեսության բավական լայն հատված և ներկայացնում է արտադրական ու վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման ոլորտը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության հիմնական շարժիչ ուժն է: Դա խթանում է մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, ճկուն է փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, օգնում է բազմազանեցնել տնտեսական գործունեությունը և կարող է էական ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման ընդլայնման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացումը յուրահատուկ և արդյունավետ նախադրյալ է բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

**Հիմնաբառեր.** փոքր և միջին ձեռնարկատիրություն, փոքր և միջին գործարարության սուբյեկտներ, SWOT վերլուծություն, ձեռնարկատիրական հմտություններ

JEL: D24, D49, E24, E32, F69

Ժամանակակից շուկայական տնտեսությունում փոքր և միջին գործարարությունը տնտեսական համակարգի կարևորագույն տարրերից է, առանց որի անհնարին է տնտեսության դինամիկ զարգացումը: Այս ոլորտի զարգացումը նպաստում է տնտեսական և զբաղվածության աճին: Ձեռներեցության ավելի ձկուն համակարգ ունենալու համար մեծ է փոքր և միջին գործարարության դերը նորաստեղծությունների գործարկման, բնակչության կարիքների բավարարման գործում և այլն:

Ձեռնարկությունների դասակարգման հիմքում առկա են տարբեր չափանիշներ, այդուհանդերձ, ըստ մեծության և չափերի, դրանք դասակարգվում են հետևյալ կերպ՝ փոքր, միջին և խոշոր: Այդուհանդերձ, նշենք, որ առ այսօր դեռևս գոյություն չունեն փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգման միջազգային հստակ չափանիշներ: Ընդհանուր առմամբ, փոքր ձեռնարկությունների մասին իրենց կարծիքն արտահայտել են տարբեր տնտեսագետներ և առաջարկել ձեռնարկությունների սահմանման ժամանակ հաշվի առնել որոշ ցուցանիշներ: Համաձայն այդ սահմանումներից մեկի՝ փոքր է համարվում անկախ և ինքնուրույն գործող, իր ոլորտում որոշակի արտոնություններ չունեցող ձեռնարկությունը, որը աշխատողների քանակով և տարեկան հասույթի չափերով չպետք է գերազանցի օրենքով նախատեսված սահմանաչափերը<sup>1</sup>:

Ամերիկացի տնտեսագետներ Նորթոն Գուդվինը և Աննա Արբորը այս հարցի կապակցությամբ կատարել են այլ եզրակացություն. փոքր ձեռնարկության ոչ մի ունիվերսալ բնորոշում չի կարող լուծել բոլոր խնդիրները: Կարևորն այն չէ, որ բոլոր խնդիրների համար կգտնվեն այնպիսի համապարփակ լուծումներ, որոնք հստակ տարբերակեն փոքր ձեռնարկությունը մեծից, այլ կարևորն այն է, որ փոքր և մեծ ձեռնարկությունների համար կատարվեն օգտակար ընդհանրացումներ<sup>2</sup>:

Փոքր ձեռնարկությունների չափը որոշելու համար հաճախ օգտագործվում են այնպիսի ցուցանիշներ, ինչպես օրինակ՝ աշխատողների քանակը, ապրանքների և ծառայությունների իրացումից ձևավորված հասույթի մեծությունը, ակտիվների հաշվեկշռային արժեքները և այլն<sup>3</sup>: Այս չափանիշի կիրառման առավելությունն այն, որ դրա օգտագործումը շատ հարմար է և հեշտ: Այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են շրջանառությունը կամ աշխատողների քանակը, որպես կանոն, հասանելի են հետազոտությունների պարագայում: Փոքր ձեռնարկությունների քանակական բնորոշման հիմնական թերությունը դրանց բացարձակության, այս կամ այն ցուցանիշի ընտրության և դրա սահմանների փոփոխության տեսական բազայի բացակայության մեջ է: Եվ դա է պատճառը, որ այս ցուցանիշների օգնությամբ դժվար է կատարել համեմատական վերլուծություն:

Բնորոշման որակական տարբերակները կանխատեսում են որակական չափանիշների օգտագործում: Նման չափանիշի օգնությամբ փոքր ձեռնարկության չափի որոշումը հաճախ կրում է սուբյեկտիվ բնույթ և, ըստ էության, հաշվի է առնում միայն ձեռնարկության արդյունքը: Որպես այդպիսի մտեց-

<sup>1</sup> Տե՛ս **Агафонов А.Ю.**, Тенденции развития финансовой поддержки малого бизнеса. “ЭПОС”, 2010, №4, էջ 59–63:

<sup>2</sup> Տե՛ս *As It the Mattered: Translating Social and Economic Theory into Human Behavior* // N.R. Goodwin (ed.). Ann Arbor (Mich.), 2012, էջ 32:

<sup>3</sup> Տե՛ս **Силаев И.**, Малые предприятия и экономическая политика государства // Проблемы теории и практики управления, 2013, № 3, էջ 11:

ման օրինակ՝ ներկայացնենք Վան Հորնի բնորոշումը /Սիդեռլանդներ, 1979 թ./, որի համաձայն՝ փոքր են համարվում այն ձեռնարկությունները, որոնք ունեն՝

- արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համեմատաբար փոքր քանակություն,
- համեմատաբար սահմանափակ ռեսուրսներ և հզորություններ,
- ձեռնարկության ռազմավարական վիճակը գնահատելու և ղեկավարելու ոչ բավարար կառավարման համակարգեր, ղեկավարման բլոկի կառուցվածք,
- կառավարման, աշխատակազմի ղեկավարման /որակավորում, ուսուցում/ աշխատանքների թերություններ,
- ձեռնարկության ղեկավար պաշտոնները զբաղեցնում են հենց «հիմնախնդիրները»<sup>4</sup>:

Հիմնվելով այս չափանիշների վրա՝ Վան Հորնը առաջարկեց Սիդեռլանդներում *փոքր* համարել 50–500 աշխատակիցներ և մինչև 1 մլն տարեկան ֆունտ ստեռլինգ շրջանառություն ունեցող ձեռնարկությունները: Մեկ այլ բնորոշման համաձայն՝ փոքր է այն ձեռնարկությունը, որի ձեռնարկատերը ինքն է ուղղակիորեն մասնակցում արտադրության և կառավարման գործընթացներին<sup>5</sup>:

Որպես կանոն, առավել ընդհանուր չափորոշիչները, որոնց հիման վրա ձեռնարկությունները բաժանվում են փոքրերի, միջինների և խոշորների, հետևյալներն են.

- անձնակազմի թիվը,
- կանոնադրական կապիտալի չափը,
- ակտիվների մեծությունը,
- շրջանառության ծավալը /շահույթի, եկամտի չափը/<sup>6</sup>:

Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ ցուցանիշների ընդհանուր թիվը, որոնց հիման վրա ձեռնարկությունները բաժանվում են խմբերի, գերազանցում է 50-ը: Սակայն առավել հաճախ կիրառվող չափորոշիչները վերոնշյալներն են: Գործնականում բոլոր երկրներում կարևոր չափորոշիչ է հաշվետու տարում աշխատողների թիվը:

Այսպես՝ Տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպությունը, որի մեջ մտնում են տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները, մինչև 19 աշխատող ունեցող ձեռնարկությունը սահմանվում է *շատ փոքր*, մինչև 99 աշխատող ունեցողը՝ *փոքր* կամ *մանր*, 100-ից մինչև 499 աշխատող ունեցողը՝ *միջին*, 500-ից ավելի աշխատող ունեցողը՝ *խոշոր*<sup>7</sup>: Իսկ համաձայն Եվրոմիության վիճակագրական ծառայության «աշխատողների թիվ» չափանիշի՝ ձեռնարկությունները լինում են.

- միկրոձեռնարկություններ՝ 0-9 աշխատող,
- փոքր ձեռնարկություններ՝ 10-49 աշխատող,
- միջին ձեռնարկություններ՝ 50-249 աշխատող,

<sup>4</sup> Տե՛ս **Ван Хорн Дж.К., Вахович Дж.М.**, Основы финансового менеджмента. 12-е изд. М., „И.Д. Вильямс“, 2008, էջ 825–826:

<sup>5</sup> Տե՛ս **Радченко Я.**, Проблемы рационального сочетания малых, средних и крупных предприятий в условиях перехода к рыночной экономике //Известия Академии наук СССР, 1991, № 1:

<sup>6</sup> Տե՛ս **Гребенюк Н.**, Законодательное регулирование предпринимательства: итоги и перспективы // Экономика и жизнь, 2015, № 52(дек.), էջ 9:

<sup>7</sup> Տե՛ս **Бухвальд Е., Виленский А.**, Российская модель взаимодействия малого и крупного предпринимательства // „Вопросы экономики“, 2006, №12:

- խոշոր ձեռնարկություններ՝ 250-ից ավելի աշխատող<sup>8</sup>:

2005 թ. հունվարի 1-ից սկսած՝ Եվրոպական հանձնաժողովը սահմանել է միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը հետևյալ չափանիշներով.

**Աղյուսակ 1**

**Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկված միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների դասակարգումը\***

Չափանիշ	Միկրո	Փոքր	Միջին
Աշխատողների առավելագույն թիվ	9	49	249
Տարեկան առավելագույն շրջանառություն	2 մլն եվրո	10 մլն եվրո	50 մլն եվրո
Հաշվեկշռի առավելագույն գումար	2 մլն եվրո	10 մլն եվրո	43 մլն եվրո
Անկախություն	Փոքր և միջին ձեռնարկություն չհամարվող մեկ կամ մի քանի կազմակերպություններին պատկանող կապիտալի մինչև 25%-ը		

\* Աղբյուրը՝ Европа. Специальный выпуск, 2004, №, 8, էջ 11:

Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական հանձնաժողովն առաջարկեց փոքր ձեռնարկությունների դասակարգում տարբեր չափանիշներով՝ ըստ տարբեր տարածաշրջանների: Այսպես՝ Աֆրիկայի երկրների համար առաջարկվեց փոքր ձեռնարկություններ մինչև 100, լատինամերիկյան երկրներում՝ 5-50, իսկ Հարավարևելյան Ասիայի և Օկեանիայի երկրների համար՝ մինչև 50 մարդ՝ ձեռքի աշխատանքներում, մինչև 20 մարդ՝ մեքենայացված աշխատանքներում<sup>9</sup>:

ԱՄՆ-ում փոքր ձեռնարկատիրության մասին օրենքով սահմանվում է, որ փոքր ձեռնարկությունը մեկ կամ մի քանի սեփականատեր, մինչև 500 աշխատող, մինչև 5,000,000 ԱՄՆ դոլար ակտիվ և մինչև 2,000.000 ԱՄՆ դոլար տարեկան շահույթ ունեցող ձեռնարկությունն է: Վարձու աշխատողների թվով պայմանավորված՝ ԱՄՆ-ում ձեռնարկությունները լինում են.

- գերփոքր՝ 1 – 24 աշխատող,
- փոքր՝ 25 – 99 աշխատող,
- միջին՝ 100 – 499 աշխատող,
- խոշոր՝ 500 – 999 աշխատող,
- գերխոշոր՝ – 1000 և ավելի աշխատող<sup>10</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ, ինչպես շատ երկրներում, այնպես էլ ԱՄՆ-ում մեծ դեր է խաղում նաև ձեռնարկության ճյուղային պատկանելությունը: Ընդ որում՝ որոշ ճյուղերում վճռորոշ է աշխատողների թիվը /վերամշակող և արդյունահանող արդյունաբերություն/, իսկ մյուսներում՝ շրջանառության ծավալը /շինարարություն, առևտուր, ծառայություններ/: Չափորոշիչների նորմաները ԱՄՆ-ի տարբեր ճյուղերում աշխատող ձեռնարկությունների համար տարբեր են:

<sup>8</sup> Տե՛ս [http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Resource\\_productivity\\_statistics](http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Resource_productivity_statistics)

<sup>9</sup> Տե՛ս Нестеренко Ю.Н., Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. М., Издательский центр РГГУ, 2007, էջ 30–32:

<sup>10</sup> Տե՛ս Разумнова И., Мелкие предприятия в промышленности США. Проблемы теории и практики управления: 2001, էջ 66–68:

Արևմտյան երկրների տնտեսությունների կառուցվածքում փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժնի ակտիվ աճ նկատվեց 70-ական թվականների կեսերին և 90-ական թվականների սկզբներին: Ներկայումս արևմտյան առավել զարգացած երկրներում փոքր և միջին ձեռնարկությունները կազմում են ձեռնարկությունների ընդհանուր քանակի 70-90%-ը<sup>11</sup>: Համեմատության համար կարելի է նշել, օրինակ՝ ԱՄՆ-ն, որտեղ փոքր և միջին բիզնեսում զբաղված է ընդհանուր բնակչության 49.9%-ը, Ճապոնիայում՝ 64.2%-ը, և Եվրոմիության երկրները, որտեղ նմանատիպ ձեռնարկություններում աշխատում է աշխատունակ բնակչության 71.92%-ը<sup>12</sup>:

**Աղյուսակ 2**

*Ընդհանուր աշխատատեղերի բաշխումն ըստ ձեռնարկությունների մեծության՝ 2015 թ. (%)\**

ԱՄՆ	1–99 աշխատողներ	100–499 աշխատողներ	500 և ավելի աշխատողներ
<b>Ճապոնիա</b>	1–99 աշխատողներ	100–299 աշխատողներ	300 և ավելի աշխատողներ
<b>Եվրոմիություն</b>	1–49 աշխատողներ	50–299 աշխատողներ	300 և ավելի աշխատողներ
<b>Աֆրիկա</b>	1–99 աշխատողներ	100–199 աշխատողներ	200 և ավելի աշխատողներ
<b>Հարավարևելյան Ասիա</b>	1–49 աշխատողներ	50–599 աշխատողներ	600 և ավելի աշխատողներ
<b>Ավստրալիա</b>	1–99 աշխատողներ	100–499 աշխատողներ	500 և ավելի աշխատողներ

\* Աղբյուրը՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision  
[http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise\\_size\\_class\\_analysis\\_of\\_key\\_indicators\\_non-financial\\_business\\_economy\\_EU-27\\_2009.PNG](http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise_size_class_analysis_of_key_indicators_non-financial_business_economy_EU-27_2009.PNG)

Միայն այս թվերն արդեն վկայում են նշված երկրների տնտեսությունների համար փոքր և միջին ձեռնարկությունների կարևորության մասին: Այս ընկերությունների արդյունավետության օգտին է խոսում նաև այն փաստը, որ կատարված 1 ԱՄՆ դոլար ծախսով դրանք ներդնում են 17 անգամ ավելի շատ նորարարություններ և մշակումներ, քան խոշոր ձեռնարկությունները, որոնք կյանքի են կոչում նոր տեխնոլոգիաների միայն 10%-ը, իսկ մնացած 90%-ը ներդնում են փոքր ձեռնարկություններն ու անկախ գյուտարարները<sup>13</sup>:

2007 թ. հուլիսի 24-ին ՌԴ-ում ընդունված «Ռուսաստանի Դաշնությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մասին» օրենքի համաձայն՝ ՌԴ փոքր և միջին ձեռնարկությունները ստեղծվում են հետևյալ չափանիշներով.

<sup>11</sup> Տե՛ս **Онопrienko В.И.**, Мелкие предприятия: опыт, проблемы. М., „Профиздат“, 2010, էջ 144:

<sup>12</sup> Տե՛ս **Береснева А.**, Роль малого бизнеса в развитии экономики. „ЭКО“. 2014, № 8, էջ 8–9:

<sup>13</sup> Տե՛ս **Бахрушина М.**, Оценка эффективности бизнеса. „Экономика и жизнь“, 2013, №11(март), էջ 12:

**Աղյուսակ 3**

**ՌԴ-ում միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների առաջարկված դասակարգումը\***

Չափանիշ	Միկրո	Փոքր	Միջին
Աշխատողների առավելագույն թիվ	15	16-100	101-250
Տարեկան առավելագույն շրջանառություն	մինչև 60 մլն ռուբլի	մինչև 400 մլն ռուբլի	մինչև 1 միլիարդ ռուբլի
Անկախություն	Փոքր և միջին ձեռնարկություն չհամարվող մեկ կամ մի քանի կազմակերպություններին պատկանող կանոնադրական կապիտալի մինչև 25%-ը		

\* Աղբյուրը՝ <http://rcsme.ru/ru/statistics>

Փոքր և միջին գործարարության և ձեռնարկատիրության դերը կարևորվեց հատկապես 20-րդ դարի 60-70-ական թվականներին: Եվրոպական միության 15 երկրներում փոքր /մինչև 250 մարդ/ և միջին /մինչև 500 մարդ/ կազմակերպություններին բաժին էր ընկնում.

- ավելի քան 72 մլն մարդ,
- ՀՆԱ ավելի քան 70 տոկոսը<sup>14</sup>:

Բացի այդ, վերջին 10 տարիների ընթացքում, համաձայն վիճակագրական տվյալների, զբաղվածների թիվը փոքր և միջին ձեռնարկություններում աճել է 4.85 տոկոսով<sup>15</sup>: Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման մակարդակը որոշ երկրներում ունեցել է հետևյալ պատկերը.

**Աղյուսակ 4**

**Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման մակարդակը 01.01.2016 թ. դրությամբ՝ ըստ որոշ երկրների\***

Երկրներ	Փոքր և միջին ձեռնարկությունների քանակ /հազ./	Փոքր և միջին ձեռնարկությունների քանակը 10 հազ. բնակչի հաշվով	Փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների քանակը/մլն մարդ/	Փոքր և միջին ձեռնարկություններում զբաղվածների քանակը ընդհանուր զբաղվածների մեջ /%/	Փոքր և միջին ձեռնարկությունների մասնաբաժինը ՀՆԱ-ում /%/
Մեծ Բրիտանիա	3841	685	18.1	49	50-53
Գերմանիա	3158	645	21.6	46	50-52
Իտալիա	3920	680	16.8	73	57-60
Ֆրանսիա	2877	458	15.2	54	55-62
Եվրոպական միության այլ երկրներ	20003	756	68.0	72	63-67
ԱՄՆ	19300	742	70.2	54	50-52
Ճապոնիա	6450	496	39.5	78	52-55
Ռուսաստան	2118	57	7.5	15	9-10

\* Աղբյուրը՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision [http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise\\_size\\_class\\_analysis\\_of\\_key\\_indicators\\_non-financial\\_business\\_economy\\_EU-27\\_2009.PNG](http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/File:Enterprise_size_class_analysis_of_key_indicators_non-financial_business_economy_EU-27_2009.PNG)

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 12–13:

<sup>15</sup> Տե՛ս **Королев В.**, Предпринимательство: дело новое или хорошо забытое? „Знание”, 2015, №1-2, էջ 6–7:

Ձարգացած, կայուն և դինամիկ աճ ունեցող երկրներում այս տեսանկյունից ներքին և արտաքին շուկաներում բարձր վարկանիշ ձեռք բերած շատ երկրներում համախառն ներքին արդյունքի առյուծի բաժինը ձևավորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության հաշվին: Եվ դրանում զարմանալի ոչինչ չկա, քանզի հենց մանր գործարարությունն է, որ մշտապես խթանում է տնտեսության, բնակչության կենսագործունեության տարաբնույթ ոլորտները: Փոքր ձեռնարկությունների ակտիվ զարգացումը սկսվեց 20-րդ դարի 90-ական թվականներին և շարունակվում է մինչև օրս:

**Աղյուսակ 5**

*Ընդհանուր աշխատատեղերի բաշխումն ըստ ձեռնարկությունների մեծության՝ 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ (%)*

ԱՄՆ	1-99 աշխատող 11.4	100-499 աշխատող 38.5	500 և ավելի աշխատող 50.54
<b>Ճապոնիա</b>	1-99 աշխատող 17.3	100-299 աշխատող 46.9	300 և ավելի աշխատող 35.8
<b>Եվրոմիություն</b>	1-49 աշխատող 26.9	50-299 աշխատող 45.02	300 և ավելի աշխատող 28.1
<b>Աֆրիկա</b>	1-99 աշխատող 24.4	100-199 աշխատող 48.9	200 և ավելի աշխատող 26.7
<b>Հարավարևելյան Ասիա</b>	1-49 աշխատող 26.9	50-599 աշխատող 46.8	600 և ավելի աշխատող 26.3
<b>Ավստրալիա</b>	1-99 աշխատող 18.9	100-499 աշխատող 41.8	500 և ավելի աշխատող 39.3

\* Աղբյուրը՝ US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII/Eurostat-Decision

ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի դասակարգումը կատարվել է դեռևս 1991 թ.՝ ՀՀ Նախարարների խորհրդի հունվարի 22-ի թիվ 42 որոշմամբ, որն, ըստ էության, ձեռնարկատիրության ոլորտի կարգավորման առաջին իրավական ակտերից մեկն է, համաձայն որի՝ առաջին անգամ հանրապետությունում կատարվեց փոքր ձեռնարկությունների դասակարգում՝ ըստ տնտեսության համապատասխան ճյուղերի ու ոլորտների.

- արդյունաբերության և շինարարության ոլորտում՝ մինչև 200 մարդ,
- արտադրության այլ ճյուղերում՝ մինչև 50 մարդ,
- գիտության ոլորտում՝ մինչև 50 մարդ,
- ոչ արտադրական ոլորտում՝ մինչև 20 մարդ,
- մանրածախ առևտրի ոլորտում՝ մինչև 15 մարդ<sup>16</sup>:

Մանր ձեռնարկություններում աշխատողների սահմանային թիվն արտացոլվեց նաև «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքում (ընդունված 1992 թ. մարտի 14-ին), որի 34-րդ հոդվածում նշվում է, որ «փոքր է կոչվում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող այն ձեռնարկությունը, որն ունի արդյունաբերության և շինարարության ոլորտում ոչ ավելի, քան 200, նյութական արտադրության մյուս ճյուղերում՝ 50, գիտության և գիտական սպասարկման բնագավառում՝ 50 և մյուս ոլորտներում՝ 25 աշխատող»<sup>17</sup>:

ՀՀ-ում փոքր և միջին գործարարության սուբյեկտները դասակարգվում են՝ ելնելով աշխատողների թվից՝ հիմք ընդունելով «Փոքր և միջին ձեռնար-

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ Նախարարների խորհրդի 1991 թ. հունվարի 22-ի թիվ 42 որոշումը:

<sup>17</sup> Տե՛ս «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքը (ընդունված 1992 թ. մարտի 14-ին):

կատիրությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 2000 թ. դեկտեմբերի 28-ին): Փոքր և միջին բիզնեսի կամ ՓՄՁ սուբյեկտ են համարվում այն առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, որոնց աշխատողների միջին ցուցակային թիվը համապատասխանում է 6-րդ աղյուսակում ներկայացված չափորոշիչներին:

Աղյուսակ 6

**ՓՄՁ սուբյեկտների դասակարգումն ըստ ՀՀ օրենսդրության<sup>18</sup>**

Ոլորտ	ՓՄՁ սուբյեկտներ		
	Գերփոքր (աշխատողների թվաքանակ/մարդ)	Փոքր (աշխատողների թվաքանակ/մարդ)	Միջին (աշխատողների թվաքանակ/մարդ)
Արդյունաբերություն և նյութական արտադրության այլ ճյուղեր	5	50	100
Շինարարություն և էներգետիկա	5	25	50
Գիտություն և կրթություն	5	25	50
Տրանսպորտ, առևտուր և ծառայություններ	5	15	30

«ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015–2017 թթ.» փաստաթղթում ներկայացվում է, որ ՀՀ-ում ՓՄՁ-ն սահմանվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի ՓՄՁ սուբյեկտները լինում են՝ գերփոքր, փոքր և միջին: Ըստ այդմ՝

- **գերփոքր** են համարվում մինչև 10 աշխատող և մինչև 100 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտները,
- **փոքր** են համարվում մինչև 50 աշխատող և մինչև 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտները,
- **միջին** են համարվում մինչև 250 աշխատող և մինչև 1 500 մլն ՀՀ դրամ տարեկան շրջանառություն ունեցող տնտեսավարող սուբյեկտները:

Սակայն, ըստ հարկային օրենսդրության գաղափարախոսության և հարկային մարմինների մոտեցումների, փոքր բիզնեսը ներկայացնում են այն տնտեսավարողները, որոնց տարեկան շրջանառությունը չի գերազանցում 58,35 մլն դրամը, միջինը՝ այն տնտեսավարողները, որոնց շրջանառությունը չի գերազանցում տարեկան 500 մլն դրամը, իսկ դրանից ավելի շրջանառություն ունեցողները համարվում են խոշոր բիզնեսի ներկայացուցիչ: Իհարկե, այս սկզբունքները հարկային օրենսդրության մեջ ամրագրված չեն, կիրառության մեջ մենք ականատես ենք լինում այնպիսի դասակարգման, որն ականհայտորեն տարբերվում է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվածից: Եվ իրականում մենք չունենք մեկ միասնական մոտեցում ՓՄՁ ձևակերպման վերաբերյալ<sup>19</sup>:

ՓՄՁ-ների համար որպես լրացուցիչ չափորոշիչ կիրառվում է նաև դրանց անկախությունը, ինչը գործնականում նշանակում է, որ բաժնետերերի ընդհանուր ժողովում ձայների կամ շահույթում չափաբաժնի 25%-ից ավելին չի պատկանում այլ խոշոր ընկերության: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, ըստ «Փոքր գործարարության, ձեռնարկության և աշխատողների ակտի»

<sup>18</sup> Տես ՀՀ օրենքը «ՓՄՁ պետական աջակցության մասին» (ընդունված 2000 թ. դեկտեմբերի 28-ին):

<sup>19</sup> Տես «ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015–2017 թթ.», 2014 թ. դեկտեմբեր, էջ 40: <http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>

(2015 թ.), փոքր է համարվում այն ձեռնարկությունը, որն ունի անկախ սեփականատեր, գործում է անկախ և տվյալ բնագավառում չի զբաղեցնում գեր-իշխող դիրք, իսկ ձեռնարկությունների չափերի սահմանման ժամանակ հաշվի են առնվում շրջանառու միջոցների ծավալը և աշխատողների թիվը: Գերփոքր կազմակերպությունների շարքն են դասվում 1–24 աշխատող ունեցող կազմակերպությունները, իսկ փոքր են համարվում 24–99 աշխատող ունեցող ձեռնարկություններն ու կազմակերպությունները: Ընդ որում, վերամշակման արդյունաբերությունում փոքր կազմակերպություններ են համարվում մինչև 200 աշխատող, ինչպես նաև 400.000 ֆունտ ստեռլինգ շրջանառություն ունեցող կազմակերպությունները<sup>20</sup>:

Աղյուսակ 7

**Փոքր և միջին ձեռնարկատիրության տնտեսական գործունեության SWOT վերլուծություն**

Փոքր և միջին ձեռնարկատիրության ուժեղ կողմերը	Փոքր և միջին ձեռնարկատիրության թույլ կողմերը	Փոքր և միջին ձեռնարկատիրության հնարավորությունները	Փոքր և միջին ձեռնարկատիրության վտանգները
Փոքր սկզբնական կապիտալ	Սահմանափակ շուկա	Մինչ «խոշոր» բիզնեսի աճ	Սնանկացման բարձր արագություն և հավանականություն
Ճկուն արձագանք արագ փոփոխվող պահանջարկի նկատմամբ Կապիտալ շինարարության համեմատաբար կարճ ժամկետներ	Աճի սահմանափակ հեռանկարներ  Իրավիճակի փոփոխություններից մեծ կախվածություն	Հավասարակշիռ զարգացման հնարավորություն  Ամուր դիրք փոքր մրցակցային շուկայում	Աճի «առաստաղի» արագ նվաճում  Շուկա մտնելու՝ այլ մրցակիցների համեմատությամբ հեշտություն
Միջոցների արագ շրջանառելիություն	Ազդեցիկ հովանավորության բացակայություն	Ստեղծագործական նախաձեռնությունների առկայություն	Ուժային ճնշման խոցելիություն և կախվածություն «աշխարհի ուժեղներից»  Ավտորիտար կառավարման առկայություն
Կառավարման օպերատիվ ռեժիմ	Ֆինանսական ռեսուրսների սահմանափակություն		
Արտաքին միջավայրի փոփոխություններից արագ հարմարվելու ունակություն	Սահմանափակ /տեղական/ շուկաների առկայություն		
Գործազրկության մակարդակի նվազեցում	Խոշոր ձեռնարկությունների համեմատությամբ փոքր և միջին ձեռնարկությունների համեմատաբար անկայունություն		
Բնակչության սոցիալապես առավել խոցելի խմբերի՝ աշխատանքի տեղավորման հիմնախնդրի լուծում			
Նորաստեղծական նախագծերի իրագործման դյուրինություն			
Սուր մրցակցային միջավայրի ստեղծում			

<sup>20</sup> <http://www.legislation.gov.uk/ukpga/2015/26/contents/enacted>

Ձարգացող տնտեսություն ունեցող երկրներում փոքր և միջին ձեռնարկատիրությունը հղի է բազմաթիվ վտանգներով, անկանխատեսելի հետևանքներով: Փորձենք SWOT վերլուծության ենթարկել այս ոլորտը:

Աղյուսակից 7-ից պարզ է դառնում, որ այս ոլորտը հարուստ է բազմաթիվ հնարավորություններով և առավելություններով, սակայն կան նաև անթիվ դժվարություններ և «թակարդներ», այդ իսկ պատճառով փոքր և միջին ձեռնարկատիրության կայունության աստիճանը բարձր չէ, և կարծիք կա, որ փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության միջին տևողությունը 4–5 տարի է<sup>21</sup>:

Սակայն միայն փոքր և միջին ձեռնարկությունները կարող են փակել այն բացերը, որոնք չի կարող ծածկել խոշոր գործարարությունը: Դրանք առաջին հերթին հասարակությանը մատուցվող ծառայություններն են (հանգստի և զբոսաշրջության, կենցաղ-սպասարկման և այլ մանրածախ ոլորտներում) և բիզնես ծառայությունները (մարքեթինգ, ինժեներինգ և այլն): Երկրորդ՝ առանց բիզնես ծառայությունների, շուկայական մեխանիզմը, այդ թվում նաև մեծ ձեռնարկությունները կզրկվեն ոլորտը սնուցող «մագանթներից», անհրաժեշտ տեղեկատվությունից, կադրերից, այլ ռեսուրսներից<sup>22</sup>: Քանի որ ռեսուրսների բազայում թարմացումը և համալրումը պարբերական բնույթ չեն կրում, ձեռնարկությունների համար այդ ամենով զբաղվելը ձեռնտու չի լինի, և ավելի մեծ ծախսեր կպահանջվեն: Այդ բեռն իր վրա է վերցնում փոքր և միջին բիզնեսը, որի զարգացումը վկայում է մրցակցության մեծացման մասին: Որքան զարգացած է մրցակցությունը, այնքան արդարացի կլինեն գները, այնքան փոքր են պետության կամ օլիգարխների հնարավորությունները՝ թելադրելու իրենց պայմանները, այնքան բարձր է տնտեսավարող սուբյեկտի տնտեսավարման ազատության մակարդակը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ներառում է տնտեսության բավական լայն հատված և ներկայացնում է արտադրական ու վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների և սպասարկման բնագավառը: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը շուկայական տնտեսության հիմնական շարժիչ ուժն է: Այն խթանում է մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, ձկուն է փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, օգնում է տնտեսական գործունեության բազմազանեցմանը և կարող է էական ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման խթանման և նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Փոքր և միջին բիզնեսի զարգացումը յուրահատուկ և արդյունավետ նախադրյալ է նաև բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Այդ է վկայում այն հանգամանքը, որ Եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ ՀՆԱ 40–60%-ը<sup>23</sup>:

<sup>21</sup> Տե՛ս **Лапушта М.Г., Старостин Ю.Л.**, Малое предпринимательство / Учебник. М., «ИНФРА-М», 2007, էջ 148:

<sup>22</sup> Տե՛ս **Нестеренко Ю.Н.**, նշվ. հրատ., էջ 274:

<sup>23</sup> Տե՛ս **Европа**. Специальный выпуск, 2015, № 13/7:

### Օգտագործված գրականություն

1. «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1992 թ. մարտի 14-ին):
2. ՀՀ օրենքը «ՓՄՁ պետական աջակցության մասին» (ընդունված 2000 թ. դեկտեմբերի 28-ին):
3. ՓՄՁ աջակցության ռազմավարություն. 2015-2017 թթ. (2014 թ., դեկտեմբեր):
4. Агафонов А.Ю., Тенденции развития финансовой поддержки малого бизнеса. “ЭПОС”, 2010.
5. Бахрушина М., Оценка эффективности бизнеса. “Экономика и жизнь”, 2013, №11(март).
6. Бухвальд Е., Виленский А., Российская модель взаимодействия малого и крупного предпринимательства, “Вопросы экономики”, 2006, №12.
7. Береснева А., Роль малого бизнеса в развитии экономики. “ЭКО”, 2014, №8.
8. Гребенюк Н., Законодательное регулирование предпринимательства: итоги и перспективы. “Экономика и жизнь”, 2015, №52.
9. Королев В., Предпринимательство: дело новое или хорошо забытое?. “Знание”, 2015, №1–2.
10. Лапуста М.Г., Старостин Ю.Л., Малое предпринимательство / учебник. М., “ИНФРА-М”, 2007.
11. Мишин А., Инвестиционная поддержка малого бизнеса. РЭЖ, 1998, №5.
12. Нестеренко Ю.Н., Малый бизнес: тенденции и ориентиры развития в современной России. М., “Издательский центр РГГУ”, 2007.
13. Оноприенко В.И., Мелкие предприятия: опыт, проблемы. М., “Профиздат”, 2010.
14. Ван Хорн Дж.К., Вахович Дж.М., Основы финансового менеджмента. М., “И.Д. Вильямс”, 2008.
15. Разумнова И., Мелкие предприятия в промышленности США. Проблемы теории и практики управления, 2001.
16. Силаев И., Малые предприятия и экономическая политика государства // Проблемы теории и практики управления, 2013, №3.
17. As It the Mattered: Translating Social and Economic Theory into Human Behavior // N.R. Goodwin (ed.). Ann Arbor (Mich.), 2012.
18. US Small Business Administration, Japan Industrial census – DG XXIII / Eurostat – Decision.
19. <http://www.rdfund.org/sites/default/files/SME%20strategy%202015%20-%202017.pdf>
20. <http://www.legislation.gov.uk/ukpga/2015/26/contents/enacted>

**АВЕТИК ОГАНЕСЯН**

*Соискатель Ереванского университета „Гладзор“*

***Характерные особенности организации малого и среднего предпринимательства в РА и в международной практике.***

– В данной статье проанализированы особенности организации малого и среднего предпринимательства в отечественной и зарубежной практике управления экономикой. Сфера малого и среднего предпринимательства включает в себя значительную часть экономики и представляет производственные и перерабатывающие предприятия, ремесла, торговлю, фермерские хозяйства, сферу услуг и обслуживания.

Малое и среднее предпринимательство в условиях рыночной экономики является основной движущей силой. Оно стимулирует частную собственность и предпринимательские навыки, является гибким в условиях меняющейся рыночной экономики, помогает диверсифицировать экономическую деятельность и может иметь значительный вклад в международную торговлю, в деле стимулирования экспорта и создания новых рабочих мест. Развитие малого и среднего бизнеса, также является особенной и эффективной предпосылкой для повышения уровня жизни населения.

**Ключевые слова:** *малое и среднее предпринимательство, субъекты малого и среднего бизнеса, SWOT анализ, предпринимательские навыки.*

JEL: D24, D49, E24, E32, F69

**AVETIK HOVHANNISYAN**

*Researcher at Yerevan "Gladzor" University*

***Typical Features of Small and Medium Entrepreneurship Organizations in the Republic of Armenia and in the International Practice.***

– The research analyzes the typical features of small and medium entrepreneurship organizations in domestic and foreign practice in managing the economy. The sphere of the small and medium entrepreneurship includes a significant part of the economy with production and processing enterprises, craft, trade, farms, services and maintenance. Small and medium entrepreneurs in the market economy is the main driving force. It stimulates private ownership and entrepreneurial skills, is flexible in the changing market economy and helps to diversify economic activity and can have a significant contribution to international trade, in promoting exports and creating new jobs, as well as the development of the small and medium entrepreneurship is a special and effective prerequisite for the improvement of living standards.

**Key words:** *small and medium entrepreneurship, small and medium entrepreneurship players, SWOT analysis, entrepreneurial skills.*

JEL: D24, D49, E24, E32, F69